Արձանագրություն N 3
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ գլյուկոմետրի թեստ-երիզների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «25» «Փետրվար» 2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան
Բացակայում էր Ն.Թովմասյան

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգը թղթային տարբերակով շարունակելու մասին

(Մ.Մխիթարյան)

Հաշվի առնելով, որ 11.02.19թ.-19.02.19թ. ընկած ժամանակահատվածում eauction.armeps համակարգում ի հայտ են եկել խնդիրներ, որի հետևանքով հնարավոր չի եղել իրականացնել, շարունակել հայտարարված աճուրդները, ուստի առաջնորդվելով ֆինանսների նախարարության 22.02.19թ. գրությամբ (կցվում է), որոշվեց «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգը շարունակել թղթային տարբերակով:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա (վերջնաժամկետ 28.02.19թ. ժամը 18:00) ընթացքում ներկայացնել որակավորումն հիմնավորող փաստաթղթերը (նախկինում կատարված պայմանագրերը և կատարումն հավաստող փաստաթղթերը) և տեխնիկական բնութագրերը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Մ.Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՕՐ.1/26-1/2727-19
22.02.19թ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ

Հարգելի գործընկերներ

Հայտնում ենք, որ 11/02/2019թ. ժամը 09:00-ից մինչև 19/02/2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով մի շարք կազմակերպություններ չեն կարողացել մասնակցության հայտ ներկայացնել գնման ընթացակարգերին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և այլն: Խնդիրը ներկայացվել է ինչպես էլեկտրոնային աճուրդի, այնպես էլ էլեկտրոնային մրցույթի համակարգը սպասարկող կազմակերպությունների ներկայացուցիչներին: Վերջիններիս հավաստմամբ աշխատանքներ են տարվում խնդիրները պարզելու և դրանք վերացնելու ուղղությամբ, սակայն գործնականում անհայտ է, թե դրանք երբ կավարտվեն:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ եթե ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ներառված է աճուրդով կատարվող գնումների ցանկում, ապա ընթացակարգը պետք է կազմակերպվի աճուրդի ձևով: Սակայն ծրագրում առաջացած խնդիրների արդյունքում ստեղծվել է ֆորս մաժորային իրավիճակ և բիզնես ընթացակարգների ծրագրավորված լինելու արդյունքում հնարավոր չէ ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև գնման ընթացակարգերի բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունը՝ հայտնում ենք հետևյալը.

1) 19/02/2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ: Նոր գնման ընթացակարգեր իրականացնելու համար՝ պայմանագրերի կառավարման ու գնումների հաշվետվողականության armeps.am/ppcm համակարգում կատարել գնումների

պլանի փոփոխություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն գնման առարկաների ձեռքբերման համար սահմանելով մրցակցային այլ գնման ձևեր:

2) այն գնման ընթացակարգերը, որոնք գտնվում են որակավորման կամ որակավորման շտկման, անգործության կամ պայմանագրի կնքման փուլում՝ անհրաժեշտ է շարունակել թղթային տարբերակով, մասնավորապես՝

- որակավորման կամ որակավորման շտկման փաստաթղթերը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել էլեկտրոնային փոստի միջոցով՝ ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին համապատասխան:
- որակավորման փուլի ամփոփումից հետո գնման ընթացակարգն անհրաժեշտ է շարունակել՝ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պահանջվող համապատասխան հայտարարությունների (գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություններ, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, կնքված պայմանագրի մասին հայտարարություն և այլն)՝ գնումների պաշտոնական տեղեկագրում (procurement.am) հրապարակելու գործառույթը:
- պայմանագրերի հաստատման գործառույթն անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային փոստի միջոցով՝ կարգի 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի և տվյալ գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի «Պայմանագրի կնքումը» բաժնով սահմանված պահանջներին համապատասխան:
- կնքված պայմանագրերն անհրաժեշտ է պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության armeps.am/ppcm համակարգ մուտքագրել՝ մրցույթի գնման ձև սահմանելով «(թղթային) էլեկտրոնային աճուրդ»:

Միաժամանակ խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել Ձեր համակարգում գործող այն պատվիրատուներին (ՓԲԸ-ներ, ԲԲԸ-ներ, հիմնադրամներ և այլն), որոնք գնման ընթացակարգերն իրականացնում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

ՀՀ մարզպետարաններին խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել նաև մարզի վարչական սահմաններում գտնվող քաղաքային համայնքներին:

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Հեռ.011800221

Արձանագրություն N 4
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ գլյուկոմետրի թեստ-երիզների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» «Մարտ» 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան
Բացակայում էր Ն.Թովմասյան

1. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման պատասխանը ստացվել է 19.02.19թ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են 18.02.19թ., իսկ էլեկտրոնային փոստով նաև 27.02.19թ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տեխնիկական բնութագրի վերաբերյալ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ը Mulberry համակարգով գրավոր խնդրանքով դիմել էր առողջապահության նախարարություն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացնելու համար: Առողջապահության

նախարարությունը էլեկտրոնային փոստով ներկայացրել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, նախկինում կատարված պայմանագիրը և կատարումն հիմնավորող փաստաթղթերը:

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ը 15.03.19թ. կրկին անգամ խնդրանքով դմել էր առողջապահության նախարարություն՝ ապրանքի ժամկետի վերաբերյալ պարզաբանում ստանալու խնդրանքով: Ի պատասխան Առողջապահության նախարարությունը վերջինիս ուղարկել է արտադրողի կողմից ներկայացված փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված առաջարկները, «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ 49,188,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, որոշվեց «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2019 թվականի մարտի 23-ից մարտի 27-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Մ.Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան

Hasmik Mnatsakanyan

From: Hasmik Mnatsakanyan <hmnatsakanyan@moh.am>
Sent: четверг 28 февраля 2019 10:42
To: 'info@c-e.am'
Cc: lawyer@c-e.am
Subject: vorakavorman-MOH
Attachments: vorak.rar; pratakol-bacum.pdf

Հրագելի գործընկեր
Ի պատասխան Ձեր հարցման, Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորումն հիմնավորող փաստաթղթերը:
Հաշվի առնելով eauction.armeps.am համակարգի խափանման խնդիրները, ուստի առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվել է որակավորման փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային հասցեով, վերջինս այն ներկայացրել է 2019 թվականի փետրվարի 25-ին:
Միաժամանակ տեղեկացնում եմ, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորումն հիմնավորող փաստաթղթերի գնահատումը դեռ ընթացքի մեջ է, մասնավորապես գնահատումը դեռ չի կատարվել:
Գնահատման արդյունքների մասին Ձեր կազմակերպությանը լրացուցիչ կտեղեկացվի:

Հարգանքով
գնումների բաժնի պետ Հասմիկ Մնացականյան

CONCERN-ENERGOMASH

"Concern-Energomash" CJSC
"Կոնցեռն-Էներգոմաշ" ՓԲԸ

Azatutyan avenue 26/8, Yerevan 0014, Armenia
0014, ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 26/8

Հեռ./Tel.: +374 10 20 97 77, 20 97 75
E-mail: info@c-e.am, www.c-e.am

15.03.2019թ.
ՀՀ ԱՆ նախարարության
գնումների համակարգման բաժնին
Հասցե՝ ք. Երևան, կառավարության տուն 3

Հարգելի գործընկեր,

Սույնով հայտնում ենք մեր ընկերության շնորհակալությունը «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորումն հիմնավորող փաստաթղթերը մեզ տրամադրելու համար:

Վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մեր մասնագետները չհանդիպեցին արտադրողի կողմից հաստատված որևէ ապացուցող փաստաթուղթ առ այն, որ Contur plus թեստ-երիզները ապահովում են «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագրի հետևյալ կետը՝ **Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից:**

Խնդրում ենք տրամադրել արտադրողի կողմից այս կետին բավարարող հավաստի փաստաթուղթ, կամ էլ եթե այս նշված փաստաթուղթը չեք ստացել, ապա ի՞նչ հիմքով եք գնահատելու:

Համագործակցության ակնկալիքով՝

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի

կոմերցիոն տնօրեն Դ. Առաքելյան_____

ASCENSIA
Diabetes Care

Ascensia Diabetes Care Holdings AG
Peter Merian-Strasse 90
4052 Basel, Switzerland

Ilia Leviev
Regulatory Affairs Manager
+41 61 56 88 230
ilia.leviev@ascensia.com
www.ascensia.com

March 18, 2019

To whom it may concern

Dear Sir/Madam,

We, Ascensia Diabetes Care Holdings AG, registered at Peter Merian-Strasse 90, 4052 Basel, Switzerland, the manufacturer of medical device "Contour Plus Test Strips" herewith inform you that the shelf life of the strips remains unchanged after the strips vial is opened, providing that the lid is tightly closed after each opening. The shelf life expiration date indicated on the strips label is equally valid for non-opened and opened packages of the test strips.

Yours sincerely,

Ascensia Diabetes Care Holdings AG

ASCENSIA Diabetes Care
Ascensia
Diabetes Care Holdings AG
Peter Merian-Strasse 90
CH - 4052 Basel

Remus Negut
Head EMEA Partner Business

Eduardo Ther
Senior Regulatory Affairs Manager